



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 27604 գործարքներ, որոնց քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 11.4%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 23.2%-ով:

2004թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11524 օտարման գործարքների 89.7%-ը կազմել են առուվաճառքները, 9.6%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 41.0%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. չորրորդ եռամսյակում, 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 12.9%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 17.5%-ով: 2004թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3865 առուվաճառքի գործարքների 65.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 0.1%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 3.0%-ով:

2004թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. չորրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		չորրորդ եռամսյակ 2003թ.	չորրորդ եռամսյակ 2004թ.	երրորդ եռամսյակ 2004թ.
Կենտրոն	350.0-970.0	408.7	498.0	471.9
Արաբկիր	250.0-560.0	306.3	399.8	371.5
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	194.1	243.1	227.8
Նոր-Նորք	115.0-250.0	152.1	215.4	195.8
Ավան	120.0-230.0	152.2	205.1	188.5
Էրեբունի	120.0-300.0	163.5	195.9	182.4
Շենգավիթ	120.0-270.0	163.3	234.2	216.2
Դավթաշեն	130.0-320.0	195.2	249.7	233.9
Աջափնյակ	120.0-300.0	172.2	229.2	213.3
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	159.4	226.9	212.1
Նուբարաշեն	75.0-120.0	70.5	93.3	81.1
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	75.0-970.0	194.3	253.7	235.9

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. չորրորդ եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 7.6%, իսկ տարեկան աճը՝ 30.6%:

2004թ. չորրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2004թ. չորրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1425 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. երրորդ եռամսյակի և 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 3.6 %-ով:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների

առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. չորրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			չորրորդ եռամսյակ 2003թ.	չորրորդ եռամսյակ 2004թ.	երրորդ եռամսյակ 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-95.0	62.8	72.5	65.7
	Ապարան	20.0-50.0	27.4	38.4	36.8
	Թալին	20.0-50.0	25.2	32.1	31.8
Արարատ	Արտաշատ	40.0-88.0	54.8	59.9	56.2
	Մասիս	40.0-90.0	54.4	63.9	61.6
	Վեդի	30.0-60.0	31.7	42.8	42.5
	Արարատ	30.0-60.0	31.6	42.7	40.3
Արմավիր	Վաղարշապատ	50.0-130.0	84.7	109.4	97.8
	Արմավիր	40.0-80.0	45.7	67.1	61.9
	Մեծամոր	20.0-50.0	30.9	32.8	32.6
Գեղարքունիք	Սևան	20.0-55.0	30.7	35.9	34.8
	Գավառ	20.0-50.0	30.5	33.8	33.6
	Մարտունի	20.0-60.0	29.7	36.6	35.8
	Վարդենիս	10.0-35.0	17.3	17.6	17.6
	Ճամբարակ	13.0-30.0	17.0	18.0	17.9
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	61.7	65.6	62.4
	Ստեփանավան	20.0-55.0	33.4	37.0	36.4
	Սպիտակ	30.0-70.0	24.1	44.6	38.8
	Ալավերդի	15.0-40.0	25.6	26.5	26.3
	Տաշիր	15.0-45.0	19.4	25.5	25.4
Կոտայք	Աբովյան	45.0-150.0	84.2	110.6	97.3
	Նոր Հաճն	50.0-110.0	52.3	79.2	66.6
	Բյուրեղավան	30.0-90.0	35.2	50.1	45.2
	Եղվարդ	35.0-80.0	40.7	55.7	49.5
	Հրազդան	30.0-85.0	31.0	48.0	40.5
	Ծաղկաձոր	40.0-130.0	75.8	92.0	85.6
	Չարենցավան	30.0-85.0	31.1	44.2	40.3
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	71.9	77.9	74.6
	Արթիկ	20.0-45.0	25.3	31.5	31.4
	Մարալիկ	18.0-45.0	23.7	28.4	28.4
Սյունիք	Գորիս	25.0-70.0	29.7	39.9	36.9
	Կապան	20.0-60.0	29.4	34.6	33.8
	Սիսիան	20.0-60.0	27.6	37.1	35.3
	Մեղրի	18.0-58.0	25.2	25.9	25.4
	Ագարակ	18.0-50.0	24.0	25.2	25.2
	Քաջարան	13.0-40.0	18.5	19.9	19.9
Վայոց Ձոր	Վայք	30.0-70.0	35.3	42.6	38.3
	Եղեգնաձոր	40.0-90.0	46.9	55.8	49.5
	Ջերմուկ	40.0-100.0	41.2	62.0	49.7
Տավուշ	Դիլիջան	30.0-70.0	36.2	45.7	42.7
	Իջևան	40.0-90.0	40.4	58.1	51.2
	Բերդ	25.0-60.0	29.3	36.5	31.8

	Նոյեմբերյան	15.0-45.0	26.8	27.7	27.7
--	-------------	-----------	------	------	------

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների եռամսյակային աճը կազմել է 7.9%, իսկ տարեկան աճը՝ 25.2%:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1331 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 310, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1021: 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 2.1%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 12.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 1.4%-ով: 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 10.4%-ով, ընդ որում Երևանում՝ 13.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 9.3%-ով:

2004թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. չորրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		չորրորդ եռամսյակ 2003թ.	չորրորդ եռամսյակ 2004թ.	երրորդ եռամսյակ 2004թ.
Կենտրոն	255.0-1000.0	422.9	501.2	476.0
Արաբկիր	205.0-900.0	310.8	403.3	383.6
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	196.4	244.8	228.5
Նորք-Մարաշ	120.0-550.0	311.8	348.4	338.7
Ավան	125.0-280.0	151.5	206.7	190.5
Էրեբունի	130.0-320.0	162.2	198.3	185.8
Շենգավիթ	120.0-350.0	164.1	236.7	217.0
Դավթաշեն	140.0-700.0	194.3	252.3	234.9
Աջափնյակ	125.0-320.0	170.2	231.5	215.0
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	159.0	229.2	214.0
Նուբարաշեն	65.0-150.0	73.4	95.0	82.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-1000.0	210.6	267.9	251.5

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 6.5%, իսկ տարեկան աճը՝ 27.2%:

2004թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային

գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. չորրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			չորրորդ եռամսյակ 2003թ.	չորրորդ եռամսյակ 2004թ.	երրորդ եռամսյակ 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.9	87.2	86.1
	Ապարան	25.0-60.0	38.8	39.5	39.0
	Թալին	20.0-65.0	28.1	35.2	33.9
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.9	62.3	62.1
	Մասիս	50.0-90.0	62.4	65.3	63.5
	Վեդի	25.0-70.0	36.3	49.4	47.5
	Արարատ	20.0-65.0	37.5	46.1	42.4
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	89.7	111.1	99.9
	Արմավիր	35.0-90.0	52.3	68.8	62.6
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.4	42.3	38.0
	Գավառ	20.0-60.0	39.9	39.9	39.9
	Մարտունի	20.0-60.0	33.9	41.1	38.3
	Վարդենիս	15.0-50.0	21.3	21.8	21.3
	Ճամբարակ	15.0-50.0	19.6	22.4	20.3
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	68.9	70.9	70.0
	Ստեփանավան	15.0-60.0	33.7	49.3	39.7
	Սյիտակ	20.0-60.0	24.1	49.1	40.1
	Ալավերդի	15.0-50.0	25.9	29.5	27.5
	Տաշիր	15.0-55.0	19.9	28.2	26.1
Կոտայք	Աբովյան	70.0-130.0	92.5	114.0	98.1
	Նոր Հաճն	40.0-90.0	54.2	81.0	67.6
	Բյուրեղավան	25.0-70.0	38.2	51.2	45.7
	Եղվարդ	40.0-80.0	47.3	57.2	50.8
	Հրազդան	25.0-65.0	40.1	49.6	42.1
	Ծաղկաձոր	70.0-120.0	85.2	98.9	91.7
	Չարենցավան	25.0-65.0	33.4	45.3	40.9
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	90.9	91.9	91.6
	Արթիկ	20.0-55.0	28.7	33.5	32.8
	Մարալիկ	15.0-50.0	23.9	29.7	29.4
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.7	42.3	38.0
	Կապան	20.0-60.0	31.1	36.5	35.3
	Միսիան	20.0-60.0	28.7	38.9	36.1
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.7	28.2
	Ազարակ	15.0-50.0	26.4	28.3	28.2
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	44.4	39.1
	Եղեգնաձոր	35.0-80.0	49.3	56.7	50.1
	Ջերմուկ	25.0-65.0	43.4	44.3	44.3
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	39.2	57.0	46.0
	Իջևան	35.0-80.0	41.2	59.2	52.6
	Բերդ	20.0-60.0	30.9	37.2	32.2
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.1	30.9

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 8.5%, իսկ տարեկան աճը՝ 19.8%:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն կայունացման միտում:

Ընդհանուր առմամբ, 2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 9861.97 հա /այդ թվում 89.75 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 9639.47 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 9800.37 հա հողերի /այդ թվում 87.85 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 9586.02 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 15 միավոր /7.40 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, որից 5-ը՝ /4.65 հա/ Երևանում:

Օտարված 46.77 հա /այդ թվում 0.82 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 40.44 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Փոխանակման միջոցով օտարվել են 14.83հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում՝ 1.08հա Երևանում/, որից 0,90հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 8373.57 հա, որից 8357.78 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2004թ. չորրորդ եռամսյակում մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ . /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ . հողերի				բնակելի կառուցապատ . /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ . հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.0	114	22.51	62	19.95	0	0.0	210	29.03	92	11.52
Արագածոտն	13	115.00	1	0.14	4	0.09	141	172.44	104	11.84	5	0.82
Արարատ	159	312.65	302	32.03	3	2.10	301	127.05	164	14.18	0	0.0
Արմավիր	380	4571.46	47	6.29	1	0.02	527	3786.32	105	9.42	0	0.0
Գեղարքունիք	3	1.12	5	1.44	0	0.0	27	28.22	10	1.20	2	0.47
Լոռի	0	0.0	1	0.03	0	0.0	27	27.06	11	1.03	3	0.06
Կոտայք	59	143.01	1	0.08	0	0.0	355	148.02	362	36.45	0	0.0
Շիրակ	6	6.43	4	0.32	6	1.84	55	60.51	17	1.49	4	0.17
Սյունիք	0	0.0	0	0.0	0	0.0	53	53.48	3	0.31	0	0.0
Վայոց Ձոր	7	9.90	0	0.0	3	0.02	19	10.29	6	0.62	4	0.04
Տավուշ	0	0.0	2	0.11	4	0.41	19	13.07	9	0.73	0	0.0
Ընդամենը	627	5159.57	477	62.95	83	24.43	1524	4426.46	1001	106.30	110	13.08

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 3840 առուվաճառքի գործարքներ /2003թ չորրորդ եռամսյակում՝ 2048/, այդ թվում 2151-ը՝

գյուղատնտեսական նշանակության /1068/, 1674-ը՝ բնակավայրերի /970/, 15-ը՝ արդյունաբերական օբյեկտների /10/ հողերի նկատմամբ:

2004թ. չորրորդ եռամսյակում հողերի առուվաճառքներից 1137-ը իրականացվել են աճուրդների միջոցով, /2003թ չորրորդ եռամսյակում՝ 219/, այդ թվում 138-ը՝ /27.36 հա/ Երևանում /68/, իսկ 999-ը՝ /5117.04 հա/ մյուս մարզերում /151/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 620 միավորը /5071.14 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2003թ չորրորդ եռամսյակում՝ 37/, 462-ը՝ /60.81 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /169/, 49-ը՝ /10.61 հա/ հասարակական կառուցապատման /12/, 6-ը՝ /1.84 հա/ արդյունաբերական օբյեկտների /1/ հողեր:

2004թ. չորրորդ եռամսյակում Երևանում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 3 գործարքներ:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 2151 գործարքներ, այդ թվում աճուրդով՝ 620, դատարանի վճռով՝ 9 և ուղղակի վաճառքով՝ 7 գործարքներ :

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	12	35.00	60.0	225.0	130.0	110	49.50	800.0	10000.0	3100.0
Ապարան						7	3.31	200.0	1700.0	615.0
Թալին						17	99.44	200.0	1680.0	465.0
Ծաղկահովիտ						7	20.20	170.0	2100.0	265.0
Արարատի մարզ										
Արտաշատ	54	123.64	150.0	3370.0	800.0	101	30.96	740.0	12000.0	2175.0
Մասիս	38	119.19	55.0	6140.0	750.0	57	24.78	400.0	8800.0	1795.0
Վեդի	67	69.82	120.0	5350.0	2065.0	142	69.96	450.0	7200.0	1405.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	58	7.30	395.0	5250.0	1990.0	307	517.20	650.0	4650.0	1345.0
Բաղրամյան	73	4253.77	45.0	985.0	180.0	99	3166.72	200.0	1500.0	605.0
Վաղարշապատ	247	305.29	40.0	11315.0	1375.0	121	102.40	980.0	14000.0	2240.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	0.99	435.0	445.0	440.0	5	0.79	420.0	1100.0	645.0
Ճամբարակ						5	2.95	100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						17	24.48	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Ալավերդի						6	4.26	360.0	5500.0	930.0
Գուգարք						2	0.94	500.0	6000.0	1795.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						13	13.96	180.0	4000.0	465.0
Տաշիր						6	7.91	100.0	400.0	245.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	8	30.00	85.0	230.0	100.0	235	60.93	600.0	20000.0	5135.0
Եղվարդ	13	79.50	110.0	1600.0	620.0	100	61.40	380.0	10000.0	3470.0
Հրազդան	35	30.31	20.0	730.0	270.0	15	23.86	250.0	6000.0	1000.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						27	19.78	550.0	2500.0	720.0
Ամասիա						5	10.07	80.0	525.0	175.0
Անի						13	18.47	240.0	800.0	295.0
Աշոցք						3	5.41	60.0	210.0	155.0
Արթիկ	6	6.43	270.0	865.0	450.0	4	3.59	140.0	800.0	290.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	525.0
Կապան						32	24.16	120.0	2000.0	335.0
Մեղրի						1	0.31	400.0	4240.0	850.0
Սիսիան						20	29.00	90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	9.90	105.0	205.0	180.0	12	7.80	260.0	4000.0	2330.0
Վայք						7	2.49	120.0	3400.0	930.0
Տավուշի մարզ										
Բերդ						5	1.69	100.0	2000.0	660.0
Իջևան								530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան						14	11.38	100.0	8340.0	665.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 1154 առուվաճառքի գործարքներ, որից 361 աճուրդային վաճառքներ, 4-ը դատարանի վճռով և 2-ը ուղղակի վաճառքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						98	106368.0	250.0	8000.0	3250.0
Ապարան						3	7120.0	250.0	1400.0	340.0
Թալին	1	1400.0	90.0	90.0	90.0	2	4270.0	100.0	800.0	140.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	170	179007.0	80.0	1770.0	445.0	34	36595.0	300.0	6000.0	1065.0
Մասիս	21	19210.0	255.0	530.0	365.0	88	63181.0	300.0	20000.0	1300.0
Վեդի	111	122050.0	85.0	530.0	380.0	42	41991.0	250.0	2200.0	785.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	25	27000.0	515.0	2100.0	590.0	32	30832.0	300.0	5000.0	1200.0
Բաղրամյան						4	4800.0	180.0	600.0	215.0
Վաղարշապատ	22	35900.0	200.0	755.0	445.0	69	58547.0	300.0	10000.0	1825.0
Գեղարքունիքի մարզ										

Գավառ						1	339.0	300.0	2000.0	600.0
Ճամբարակ						1	1530.0	100.0	300.0	160.0
Մարտունի						6	5514.3	200.0	600.0	255.0
Սևան	5	14400.0	225.0	235.0	230.0	1	1700.0	200.0	2000.0	260.0
Վարդենիս						1	2952.0	100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						5	3606.5	150.0	5200.0	825.0
Սպիտակ						3	3200.0	140.0	900.0	185.0
Ստեփանավան	1	300.0	100.0	100.0	100.0	3	3520.0	100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	800.0	620.0	620.0	620.0	151	143015.0	300.0	10000.0	2235.0
Եղվարդ						187	187668.0	300.0	10000.0	2550.0
Հրազդան						23	32982.0	300.0	8000.0	1610.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						9	9560.0	250.0	3400.0	445.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի						1	1630.0	150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ	4	3200.0	150.0	1195.0	935.0	7	3720.0	150.0	900.0	215.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	800.0	150.0	1200.0	400.0
Կապան						1	600.0	150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան						1	1710.0	150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	3620.0	150.0	2200.0	350.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						8	5839.0	150.0	2200.0	620.0
Նոյեմբերյան						1	1450.0	100.0	1400.0	210.0

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 43 գործարքներ 24.78 հա մակերեսով, ընդ որում՝ 21-ը՝ Արարատի /4.99 հա/, 2-ը՝ Արմավիրի /1.52 հա/, 1-ը՝ Գեղարքունիքի /0.04 հա/, 3-ը՝ Շիրակի /2.21 հա/ և 16-ը՝ Տավուշի /16.03 հա/ մարզերում:

2004թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2353 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 26.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 1.6%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 23.3%-ով:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 169 բնակարանների, 54 անհատական բնակելի տների, 553 հասարակական, 60 արտադրական նշանակության օբյեկտների, 1509 միավոր հողերի, 8 ավտոտնակների գործարքներ: Այգետնակի վարձակալության գործարք չի գրանցվել:

2004թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 133 վարձակալության գործարքների քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 38.1%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 9.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 8069.65 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 21.62 հա

Երևանում/։ Մարզերում վարձակալված հողերից 5036.69 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 29.72 հա նախկին պահուստային / 38.64 հա բնակավայրերի, 49.18 հա արդյունաբերական օբյեկտների, 0.03 հա էներգետիկայի օբյեկտների, 2802.00 հա անտառային, 29.67 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 1.80 հա ջրային, 90.03 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր։ Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Վայոց Ձորի մարզում՝ 2733.52 հա, որից 329.18 հա գյուղատնտեսական նշանակության։ 2004թ. չորրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 765.00 հա հողեր։

Ստորև ներկայացվում է 2004թ. չորրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր /</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	75	419.91
Արարատ	1	3.00	150	646.51
Արմավիր	0	0.00	7	83.80
Գեղարքունիք	4	133.00	51	455.04
Լոռի	0	0.00	91	251.87
Կոտայք	0	0.00	120	200.83
Շիրակ	15	448.00	181	1621.09
Սյունիք	5	86.00	56	244.06
Վայոց Ձոր	0	0.00	66	329.18
Տավուշ	2	95.00	11	19.41
Ընդամենը	27	765.00	808	4271.70

2004թ. չորրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում։

2004թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2473 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.0%-ը։ Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 43.4%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 39.1%-ով։ Ընդ որում գրավադրման գործարքների 39.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից։

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /40.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /16.0%/, առանձնատների /13.9%/ և հողերի /24.6%/, նկատմամբ։

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1103 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 8.1%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 48.3%-ով։

Ընդհանուր առմամբ, 2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 952.84 հա /այդ թվում 11.82 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 936.22 հա գյուղատնտեսական նշանակության։ Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 470.56 հա գյուղատնտեսական նշանակության :

2004թ. չորրորդ եռամսյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 45 և 17 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 6.1%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 47.5%-ով: 2004թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 27.4%:

2004թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 4520 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 5.2%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 35.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /50.5%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն